ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2022թ. թիվ 83-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 231-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետը և 9-րդ կետի 1)-ին ենթակետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 07.02.2022թ. գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. մայիսի 10-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 231-Ա որոշման 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«12. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա. Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Օհանյան Վանիկ» բառերը փոխարինել «Նիազյան Արայիկ» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

07/02/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. փետրվարի 7
ք.Վանաձոր